Հավելված
Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի
2014 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 639 Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքային համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ քաղաքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-5):

Իրավաբանական բաժնի պետը՝

ա) Բաժնում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները:

բ) Կատարում է բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով՝ համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները:

գ) Պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

դ) Լուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրները, ընդունում որոշումներ:

ե) Կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Բարձրագույն կրթություն

բ) Համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ:

գ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի,<< Համայնքային ծառայության մասին>> <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>> <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության ու աշխատակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

դ) Անհրաժեշտ տեղեկության տիրապետում:

ե) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2015 թվականի հունվարի 22-ին ժամը 10^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-3):

Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) Կատարում է բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

բ) Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունների և վերլուծությունների կատարումը և դրա հիման վրա ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.

գ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բյուջետային գործընթացին.

դ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բյուջետային հայտերի կազմման համար մեթոդական ցուցումների մշակման աշխատանքներին.

ե) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բյուջետային հայտերի կազմման աշխատանքներին.

զ) Վերահսկում է քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների նախահաշիվների կազմման և փոփոխությունների կատարման ընթացքը.

է) Կատարում է քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների հայտերի ձևակերպումը և վերահսկում դրանց կատարման ընթացքը.

ը) Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Բարձրագույն կրթություն

Համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թ. հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

բ) Ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության <<Համայնքային ծառայության մասին >>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) Տիրապետում անհրաժեշտ տեղեկության.

դ) Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը կկայանա 2015 թվականի հունվարի 22-ին ժամը 11^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

3. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-7):

Առաջին կարգի մասնագետը՝

ա) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

բ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

գ) Կատարում է բաժնի պետի հանձնարարականները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Առնվազն միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության <<Համայնքային ծառայության մասին >>, <<Տեղական ինքնակառավարման մասին >>, <<Իրավական ակտերի մասին >>, << Հաշվապահական հաշվառման մասին >>, << Հայաստանի Հանրապետությունում բյուջետային համակարգի մասին >>, <<Գանձապետական համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2015 թվականի հունվարի 22-ին ժամը 12^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

4. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3-2):

Երկրորդ կարգի մասնագետը՝

ա) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

բ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

գ) Կատարում է բաժնի պետի հանձնարարականները:

դ) Իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը և ապահովում է փաստաթղթաշրջանառության աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Առնվազն միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության <<Համայնքային ծառայության մասին >>, <<Տեղական ինքնակառավարման մասին >>, <<Իրավական ակտերի մասին >>, Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2015 թվականի հունվարի 22-ին ժամը 13^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

5. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, գիտության, մշակույթի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-16):

Առաջին կարգի մասնագետը՝

ա) Կատարում է բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով,

բ) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,

գ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

դ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

ե) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի,<< Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Կրթության մասին >>, <<Նախադպրոցական կրթության մասին>>, <<Մանկապատանեկան սպորտի մասին >>, <<Իրավական ակտերի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) Տիրապետում է անհրաժեշտ տեղեկությանը.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը կկայանա 2015 թվականի հունվարի 22-ին ժամը 14^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

6. Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման և տրանսպորտի վերահսկողության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-8):

Առաջին կարգի մասնագետը՝

ա) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

բ) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

գ) Կատարում է բաժնի պետի հանձնարարականները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Առնվազն միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Առևտրի և ծառայությունների մասին>>, <<Տեղական տուրքերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2015 թվականի հունվարի 22-ին ժամը 15^{00}- ին Արմավիրի քաղաքապետարանի շենքում:

Նշված թափուր պաշտոնների մրցույթներին մասնակցելու համար դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս)
- կրթության մասին փաստաթղթի (դիպլոմ) պատճենը բնօրինակի հետ
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- զինգրքույկի պատճենը բնօրինակի հետ (արական սեռի անձինք)
- մեկ լուսանկար 3x4 չափի
- անձնագրի պատճենը բնօրինակի հետ:

Մրցույթի հարցաշարը փակցված է քաղաքապետարանում: Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր ժամը 9^{00}-ից մինչև ժամը 18^{00}, հետևյալ հասցեներով՝ Արմավիրի քաղաքապետարան՝ ք. Արմավիր, Հանրապետության փ. 32 (հեռ.՝ 0237-2-38-69) կամ Արմավիրի մարզպետարան՝ ք. Արմավիր, Արովյան փ. 71 (հեռ.՝ 0237-2-07-70):

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015 թվականի հունվարի 12-ը:

Արմավիրի քաղաքապետ՝ Ռ. Խլղաթյան